# Ազերիները կանչում են բանակցելու, բայց ինչպե՞ս

Մոսկովյան «Կուրանտի» թերթի հունիսի 14-ի համարում տպագրվել է երկու ծավալուն հոդված, որոնց հեղինակները եղել են Հայաստանում և Ադրբեջանում, հանդիպել տարբեր խավի մարդկանց և ընթերցողի դատին են հանձնել այն, ինչ տեսել են ու գրի առել: ««Օղակը» ուժեղ ձեռքում» հոդվածում, ուշագրավ է հատկապես Ադրբեջանի ներքին գործերի նախարար Մուհամմեդ Ասադովի պատասխանը. «Ես կտրականապես հաստատում եմ, որ ՕՄՈՆ-ի կողմից Չայքենդ և Մարտունաշեն գյուղերում կատարված վայրագությունների մասին լուրերը լրիվ սուտ են: Մեր ՕՄՈՆ-ը կազմված է մոտ 500 ընտրված տղաներից, որոնք բոլորը ծառայել են կամ Աֆղանստանում, կամ դեսանտային են եղել, հատուկ նշանակության ջոկատային, կամ էլ սահմանապահ: Նրանց շարքերում քիչ չեն սպորտի վարպետները: Նրանք հայ հանցագործներ չեն: Մենք մանրամասն ստուգում ենք ամեն մի թեկնածուի և եթե հայրը կամ անգամ պապը բանտարկված է եղել, ջոկատի կազմում չենք ընդգրկում: Դրանք հիանալի տղաներ են»:

Իսկ այն հարցին, թե եթե դանակահարություններից սպանված հայերի, անդամահատված կանանց մասին լուրերը սուտ են, ապա ինչու նրանք դատի չեն տալիս թերթերին, նախարարն առանց վարանելու պատասխանում է. «Այդ ամենը սուտ է: Ահա վերջերս էլ Պուգոն զանգահարեց, ինչ-որ մեկը նրան զեկուցել էր, որ Գրիգորյան ազգանունով մեկը ըսպանվել է բերանի մեջ կրակելուց: Այդ բոլորը սուտ է: Իսկ թերթերին դատի չենք տալիս, որովհետև ժամանակ չունենք, պետք է կարգուկանոն հաստատել: Եվ ստում են, թե իբր մեր ՕՄՈՆ-ը թալանչիությամբ է զբաղվում: Հավատացեք, ինձ մոտ ոչ մի նման դեպք չի գրանցվել»: Նույն հոդվածում, Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Թելման Օրուջևը ավելի առաջ է անցնում և հայտարարում. «Այսօրվա դեպքերին չի կարելի նայել պատմությունից կտրված: Հայկական ազգայնականությունը ձևավորվել է դարերով: Վերջին տարիներին այն ծաղկել է: Ամեն ինչ սկսվեց 1988 թվականից, Ստեփանակերտի միտինգներից: Իսկ հետո արդեն հրապարակվեց Հայաստանի Գերագույն խորհրդի հրամանագիրը Ղարաբաղի միավորման վերաբերյալ: Քավ լիցի, մենք ինչպես կարող ենք համաձայնվել, երբ խոսքը վերաբերում է մեր երկրի մասնատմանը: Պատերազմի դադարեցման ճանապարհը մեկն է. հայերը չեղյալ են համարում այդ հրամանագիրը, և դրանից հետո մենք նստում ենք բանակցությունների սեղանի շուրջը: Միայն դրանից հետո: Իսկ ինչ վերաբերում է կարմիր բանակի օգնությանը, ապա նա միայն պաշտպանում է իր երկիրը. չէ՞ որ Ադրբեջանը մնում է ԽՍՀՄ կազմի մեջ, իսկ Հայաստանն իրեն համարում է կողմնակի, արտասահմանյան պետություն: Այնպես որ, ԽՍՀՄ-ը պաշտպանում է իր անկախությունը և տարածքային ամբողջականությունը»: Հոդվածում մեջ են բերված նաև պրեզիդենտ Մութալիբովի, ժողովրդական ճակատի վարչության անդամ Հիքմեթ Հաջիզադեի մեկնաբանությունները, որոնք հիմնականում կրկնում են իրար:

Վերջում հոդվածագիր Իգոր Վոևոդինը անում է հետևյալ եզրակացությունը. «Կենտրոնին պետք էր Միութենական պայմանագիր, դրա համար էլ նրա զորքերը մտան: Ադրբեջանին, բացի իր ամբողջականությունից, շահավետ էր նաև հայ գրոհայինների ոչնչացումը: Բայց ինչո՞ւ հայերին տեղահանեցին իրենց հայրենի գյուղերից: Երևի նրա համար, որպեսզի հետո սեփական ժողովրդի առաջ այնպիսի ուժեղ ձեռքի տպավորությո՞ւն թողնեն, որը կարող է լուծել բոլոր հարցերը: Պատմությունը վկայում է, որոշակի ժամանակաընթացքում ուժեղ, հաստատուն ձեռքը, թեև մասամբ արյունով թաթախված, լինում է ավելի ժողովրդական»: